ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՋԳԵՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱՐԱՐԻ ՍՈՑԻԱԼ–ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Հոդվածում բնութագրվում են անցումային հասարակությունում տեղի ունեցող սոցիալ–տնտեսական, հոգեբանական, բնորոշ փոփոխություններն, ու տրվում դրանց հոգեբանական հիմնավորումները: Հեղինակները հետազոտությունների միջոցով բացահայտում են անցումային հասարակությունում արդյունավետ գործարարի անձի կառուցվածքի, բիզնեսի բնագավառում արդյունավետության ապահովման անձնային որակների յուրահատուկ համախումբը, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում են փոխակերպվող հասարակությունում գործարար անձի հաջողության հասնելու հենքային նախադրյալներ: Հետազոտական ճանապարհով բացահայտվել են նաև մի շարք սոցիալ–հոգեբանական, անձնային բաղադրամասեր, որոնք բիզնես բնագավառում հանդիսանում են անձի հոգեբանական նկարագրի կարևոր բաղկացուցիչ մասը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ փոխակերպվող հասարակություն, հոգեբանական նախադրյալ, անձի ստեղծարարություն, հոգեբանական հենքային բաղադրամասեր, գործառութային հնարավորություններ:

Ժամանակակից հասարակությունների սոցիալ–տնտեսական, քաղաքական զարգացումների պայմաններում ցանկացած երկրի տնտեսության վերակառուցման առաջնահերթ նպատակներից մեկը հանդիսանում է ներկա և գալիք ժամանակների համար զարգացման ռազմավարական արդյունավետ ծրագրերի մշակումը: Դրանում իր կարևորագույն տեղն ունի գործարար միջավայրի սոցիալ–տնտեսական, կառավարման, գործարար անձի հոգեբանական դիմանկարի, նրա մասնագիտական պիտանելիության, գործարար հարաբերությունների խորքային մեխանիզմների իմացաբանական կողմերի տեսական և մեթոդաբանական հիմնարար դրույթների մշակումը, հավանական զարգացումների կանխատեսումները և այլն[1;8]: Այս առումով՝ Հայաստանի Հանրապետության բիզնեսի կառավարման բնագավառում խիստ կարևորվում է գործարարի անձի ուսումնասիրությունը, գործունեության առանձնահատկությունների զարգացման՝ նոր հոգեբանական տեխնոլոգիաների մշակումն ու դրանց ներդրումը:

Ժամանակակից առևտրական ձեռնարկությունների հաջողությունների ապահովման, բիզնես միջավայրի զարգացման արդյունավետության բարձրացման, ազգաբնակչության գնողունակու-

թյան, ապրանքների պահանջարկի ճիշտ հաշվառման և գների արդյունավետ հիմնավորման և բազմաթիվ այլ հիմնաբար խնդիրների հանգուցալուծումները պայմանավորված են բիզնեսմենի արդյունավետ կառավարման հնարավորություններով և այլն: Պահանջների այս ամբողջականությունը կանոնակարգվում է կառավարման հոգեբանության ու տնտեսագիտության բնագավառներում գոյություն ունեցող օրենքներով ու դրանցում գործող նորմատիվային ակտերով, որոնք հանդիսանում են բնագավառն ու գործընթացներն ուղղորդող կարևորագույն փաստաթղթեր[6;7]: Այդ ամենի գործարկումն ու անհրաժեշտ հետևանքների կանխատեսումը, ժամանակին տեղին միջամտությունների, ստեղծարար որոշումների կայացումը ինքնին հանդիսանում է արդյունավետ «կառավարում» կամ «մենեջմենթ»:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության բնագավառում հանրահայտ մասնագետների (Հ. Մարզպանյան 2012, Գ.Ա. Ղարիբյան, Մակկոնել, Բրյու 1998, Ա.Սմիթ, Емельянов Е. Н., Поварницына С. Е 1997,), գործարար հարաբերությունների կառավարման բանագավառում ճանաչված գիտնականների(А.А. Шиян 2008,Абрахам Маслоу 1999, Питер Друкер 2004, Ли Якокка 1995), կառավարման հոգեբանության բնագավառում հայրենական և արտասահմանյան առաջավոր գիտական հայացքներ կրող տեսաբանների աշխատանքները (Ս. Ռ. Գևորգյան, Ս.Սեդրակյան,М. МЕЛИЯ 2006, Урбанович А. А.Ю. Н. Емельянов 1971, Г. Минцберг և այլն):

ՀՀ–ը գտնվելով տնտեսության և հասարակության անցումային փուլում չի կարող անմասն մնալ վերը թվարկվածներից: Բացի այդ, արևմտյան կառավարման տեխնոլոգիաների հաճախ ոչ ճիշտ տեղայնացնելու հետևանքով կազմակերպությունը զարգանում է շատ դանդաղ: Կազմակերպության զարգացման և գործունեության հաջողությունները կախված են ղեկավարի պրոֆեսիոնալ գիտելիքների և այն գործնականում ճիշտ կիրառելությունից: Բացի այդ, փոխակերպվող հասարակության ներսում օբեկտիվորեն ձևավորվում են սոցիալ–տնտեսական, բարոյա–հոգեբանական նոր փոխհարաբերություններ, որոնք բազմաթիվ խնդիրներ են առաջադրում հատկապես գործարար անձանց համար: Նման պայմաններում բնականաբար առաջ է գալիս անձի հարմարվելու և սոցիալիզացիայի հիմնախնդիրը[4;5;9]:

Ըստ Ռայենի՝ նոր միջավայրում հարմարումը տեղի է ունենում անձի կոգնիտիվ համակարգերի գործառութային հնարավորությունների վերակառուցման հաշվին, որտեղ անձի մտավոր կարողություններն ու սոցիալական հմտությունները առաջնային նշանակություն են ստանում [8]: Այս առումով՝ նոր պայմաններում հաջողություններ են գրանցում ճկուն միտք և ուժեղ կամք ունեցողները, որոնք կարողանում են ոչ միայն կանխատեսել հավանական փոփոխությունների զարգացումները, այլև կարողանում են ժամանակին ձեռնարկել պահի թելադրանքներն ու իրենց սոցիալական կապերի շնորհիվ իրականացնել սեփական նախաձեռնությունները:

ՀՀ–ում վերջին տասնամյակներում բիզնես միջավայրում հանդես եկան բավականին հաջողակ արդյունքներ գրանցած բազմաթիվ գործարար անձինք, որոնք մի կողմից հասարակության բազմաթիվ շերտերի համար համարվում էին պատահական երևույթ կամ բախտի հաջողակներ, մյուս կողմից՝ նրանց գործունեության վերլուծությունը, եկամուտների ձեռք բերման սոցիալ–հոգեբանական դետերմինանտների(պատճառներ) ուսումնասիրությունները ցույց են տալիս,

որ այս անձինք օժտված են բիզնես միջավայրի համար ոչ ստանդարտ հոգեբանական հնարավորություններով (կոմպետենցիաներով): Ստացվում է իրարամերժ իրականության մի այնպիսի իրավիճակ, որում մի կողմից ակադեմիական կրթություն ստացած բիզնեսմենների մրցակցության չդիմանալը, մյուս կողմից՝ պատահական համարվող բիզնեսմենների լայն քայլերով առաջընթացը: Ակամայից հարց է առաջանում՝ սա ի՞նչ է՝ օրինաչափությո՞ւն, թե՞ պատահականություն:

Մասնագիտական գրականության վերլուծությունները ցույց են տալիս (Robert Shternberg 1996, Г. Минцберг 2004, Питер Друкер 2004, Н.К. Моисеева 2002,), որ հատկապես բիզնեսի բնագավառում հաջողության են հասնում ոչ թե ակադեմիական գիտելիքներով ուղորդվող ստանդարտ մտածողություն ու վարքագիծ ունեցողները, այլև այս բնագավառում հաջողություն գրանցող «խելագարները» «чудаки», իսկ երբեմն էլ արկածախնդիր մտահաղացումներով ու այս բնագավառում առանձնահատուկ ստեղծարարությամբ օժտված անձինք[3;10]: Կառավարման հոգեբանության մեջ հայտնի է այն դրույթը , որ պարտադիր պայման է գործարարի հայտնվելը **անհրաժեշտ պահին, անհրաժեշտ վայրում:** Այս պարզ բանաձևն իր մեջ ընդգծում է գործարար անձի առանձնահատուկ մասնագիտական մտածելակերպը, բանականությունը, որը կարողանում է մի հայացքով գնահատել ու արժևորել, (հաճախ նույնիսկ իր համար անբացատրելի կերպով) իրավիճակն ու ստեղծված հարաբերությունները, դրանց զարգացման միտումները:

Մեր ուսումնասիրություններում, որպես նպատակ առաջադրվել է փոխակերպվող հասարակությունում գործարար անձանց արդյունավետության հոգեբանական նախադրյալների ուսումնասիրումը:

Հաշվի առնելով հետազոտության նպատակի իրականացման անհրաժեշտությունն ու առաջադրվող գիտական պահանջները, մեր առջև խնդիր ենք դրել ուսումնասիրել.

- մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող արդյունավետ բիզնեսմենի անձնային որակների, նրա մտավոր հնարավորությունների, կառավարման ու կազմակերպչական կարողությունների հոգեբանական հիմնավորումները:
- բիզնեսում լուրջ հաջողություններ գրանցած անձանց ստեղծարարության, որոշումների ընդունման, նրա ռիսկի ու մտքի որակների դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները:
- անձի կոնֆլիկտայնության, հանդուրժողականության ու համագործակցության, փոխօգնության, շփվողականության ու հարաբերությունների պահպանման կարողությունները, որպես կոլեկտիվի անդամների, գործընկերների հետ բարենպաստ աշխատանքային մթնոլորտի ձևավորման հիմնական պատասխանատու:
- բիզնեսմենի անձի հոգեկան աշխատունակության, հոգեկան հուսալիության ու հոգեկան կայունության առանձնահատկությունների, դժվար իրադրություններում ինքնատիրապետման ու ինքնակառավարման, անբարենպաստ հոգեվիճակների ինքնակարգավորման ունակությունները,
- անձի ինքնահիրացման, ինքնաբավարարման ու ինքնագնահատականի դրսևորման առանձնահատկությունները:
- բիզնեսմենի կառավարման ոճերի, կոլեկտիվի անդամների գնահատման, կոլեկտիվում խրախուսանքների ու պատիժների, խթանների սահմանման ու իրականացման ձևերի ու

դրանց հաճախականության դրսևորումները և այլն,

- հետազոտության արդյունքների հիման վրա մասնագիտության պահանջներին համապատասխան հաջողակ բիզնեսմենի հոգեբանական դիմանկարի ստեղծումը:

Հետազոտության համակազմում ընդգրկվել են 60 բիզնեսմեն անձինք (30 կին և 30 տղամարդ), որոնք բիզնես միջավայրում ունեն կայուն հաջողություններ: Որպես թիրախային խումբ՝ հետագայում դրանցից առանձնացրել ենք 40 բիզնեսմենների, որոնք նախկինում չեն առնչվել այդ ոլորտի հետ և չունեն համապատասխան մասնագիտական կրթություն: Հետազոտական խմբերը համալրվել են նախօրոք մշակված անանուն հարցաթերթիկների հիման վրա արված հարցումների հիման վրա; Դրանցում բացահայտվել են հարցվողների բիզնեսում հայտնվելու պատճառները, հաջողությունների կայունության և տատանումների տեղաշարժը, ինչպես նաև բիզնեսմենի այն կարևորագույն հատկանիշները, որոնցով պայմանավորված են նրանց հաջողությունների ընթացքը: Կարևորվել են նաև նրանց բիզնեսում գտնվելու ստաժը, մասնագիտական աճի ձեռքբերումները, նրանց բազային կրթությունը, նախկին մասնագիտությունն ու բիզնեսում հայտնվելու պատճառները, նրանց վերաբերմունքը (առնչությունը): Հարցվողներին առաջադրվել են նաև նրանց կողմից բիզնեսում կարևորվող անձնային որակներից ըստ նշանակելիության առաջնության նշել 10 որակներ, որոնք հաջողության հասնելու համար հիմնական դեր են խաղում: Հետազոտությունն իրականացվել է Երևանի տարբեր առևտրական ձեռնարկությունների գլխամասային և ճյուղային հիմնարկությունների ղեկավարների ու տնօրենների հետ: Այն իրականացվել է 2012 թ.–ի հունիս ամսից մինչև 2013 թ.–ի ապրիլ ամիսներն ընկած ժամանակաշրջանում:

Հարցաթերթիկների վերլուծությունը մեզ համար բացահայտեց մի շարք հետաքրքիր փաստեր: Այսպես, 60 հարցվողներից 52–ը համարում են, որ բիզնեսում հաջողությունը պայմանավորված է ճիշտ ժամանակին կողմնորոշվելու և պահանջարկը գնահատելու հնարավորությամբ, ինչպես նաև ռիսկի գործոնով, որոշ դեպքերում նաև արկածախնդրության առկայությամբ: 49 անձիք կարևորել են բիզնեսի գործընթացի ճիշտ ժամանակին սկսելը, 46–ը համարում են, որ գոյություն ունի հատուկ «հոտառություն»՝ ինչից սկսել, (սկզբնական շրջանում չկարևորելով նույնիսկ մեծ ներդրումները): 43 հարցվողներ նշել են բիզնես դաշտի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը և դրա հմտորեն օգտագործումը: Հարցվողներից 42–ը կարևորել են բիզնես միջավայրում անձնական հուսալի կապերի առկայությունը, փոխադարձ վստահությունն ու արդյունավետ համագործակցությունը: Հարցումների նախնական արդյունքները կարևորվում են նաև նրանով, որ դրանք հիմք հանդիսացան ուրվագծել բիզնեսում հաջողության հասնելու անձի սոցիալ–հոգեբանական, մասնագիտական որակների այն համախումբը, որոնք բիզնեսում կայուն դիրք ունեցող անձանց համոզմամբ հենքային են և հաջողության հասնելու համար հանդիսանում են կարևոր նախապայման: Հարցաթերթիկների արդյունքների վերլուծության վրա հնարավորություն ընձեռվեց նաև մշակելու հետազոտությունների իրականացման ռազմավարությունն ու հետագա ընթացքը: Ելնելով այս հանգամանքից՝ հետազոտվողների ընդհանուր խմբից առանձնացրել ենք 40 անձանց (20 կին և 20 տղամարդ), որոնց հետ կազմակերպվել են հիմնական հե-

տազոտություններն ու իրականացրել դրանցում առաջադրված խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակի իրականացման համար ընտրել ենք հետևյալ մեթոդները.

1. Մասնագիտական բազային որակների ուսումնասիրման անանուն հարցարան:
2. Անձի խառնվածքի տիպոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրում:
3. Կառավարման ոճերի ուսումնասիրման, միջանձնային փոխհարաբերություններում կոնֆլիկտայնության ու անձի հանդուրժողականության ուսումնասիրման թեստ:
4. Անձի ստեղծարարության, մտքի որակների դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրման թեստ:
5. Անձի հոգեկան աշխատունակության ու հոգեկան հուսալիության ուսումնասիրման թեստ:
6. Սթրեսում ադապտացիայի և դեզադապտացիայի հնարավորությունների ուսումնասիրման թեստ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ միջանձնային փոխհարաբերություններում համագործակցության, կոնֆլիկտների շրջանցման ու փոխհարաբերություններում համագործակցություն, ինչպես նաև հանդուրժողականություն դիտարկվում են հետազոտվող կանանց ճնշող մեծամասնության մոտ, անկախ խառնվածքի տիպից: Մինչդեռ, տղամարդկանց հետազոտվող խմբերում նկատվում է էական տարբերություններ, որոնք պայմանավորված են խառնվածքի տիպոլոգիական առանձնահատկություններով: Այսպես, հոգեկան աշխատունակության, հոգեկան հուսալիության ու սթրեսում հարմարման, միջանձնային հարաբերություններում համագործակցության, հանդուրժողականության ցուցանիշները աչքի են ընկնում ֆլեգմատիկ տղամարդիկ: Խոլերիկ տղամարդկանց մոտ գերակայում է կոնֆլիկտայնության ու նաև պատասխանատվության պահերին խուսանավելու, հարաբերությունների իրենց տարբերակն առաջադրելու և պնդելու հետևողականություն, եռանդուն, բայց ոչ տևական շարունակություն ունեցող ակտիվություն: Խառնվածքի նույն տիպն ունեցող կանանց մոտ գերակշռում է կամքի դրսևորման, ստեղծարարության, մտքի ճկունության, արագության որակները, չնայած, որ հոգեկան աշխատունակության, սթրեսում կայունության ու հարմարվելուն ուղղված նրանց ցուցանիշները ցածր են: Այն դրսևորվում է թվերի որոնման ժամանակի բարձր տևողականության, ճգնաժամային իրավիճակներում կողմնորոշման, ճշգրիտ վճիռների կայացման միջին արդյունավետությամբ: Կառավարման ոճերի դրսևորման արդյունքների քննարկման ժամանակ եթե տղամարդիկ ցուցաբերում են բազմազանություն, կապված երկրում գոյություն ունեցող հիմնախնդիրների, սոցիալ–տնտեսական, անգամ քաղաքական առանձնահատկությունների յուրահատկությունների հետ, ապա կանանց մոտ դիտարկվում է ավտորիտարկառավարման գերակայություն, որոշ դեպքերում, եթե անգամ հիմնախնդիրների քննարկում անգամ դիտարկվում է, ապա վերջնական արդյունքում նկատվում է կոլեգիալ քննարկումների արդյունքում առաջացած որոշումների, գաղափարների սեփականացում, որը որպես ղեկավարի վերջնական որոշում պարտադրվում է կառավարվող օղակների պատասխանատուներին: Այսպիսի դեպքերում իրենց իսկ գործարար կառավարող կանանց կողմից այն դիտարկվում է հեռանկարային, քանզի այդ գաղափարները չեն անհետանում, մյուս կողմից՝ դրանք ծնվում են գործընթացը հասկացող կազմակերպիչների կողմից, որպես իրավիճակի թելադրանք:

Հոգեկան կայունությունը, աշխատունակությունը անձի մոտ դրսևորվում է սթրեսածին պայմաններում հուզական կայունությամբ, միապաղաղության ու անբարենպաստ պայմաններում գործունեության արդյունավետության պահպանմանը, անձի հոգեֆիզիոլոգիական համակարգերի գործառնական հավասարակշռությամբ, վեգետատիվ նյարդային համակարգության նպատակահարմար ցուցանիշների կայունությամբ: Հետազոտվող խմբերում հոգեկան աշխատունակության, սթրեսակայունության, սթրեսում հարմարվելու, գործունեության արդյունավետության ցուցակիշներով առանձնամում են սանգվիննիկ, ֆլեգմատիկ տղամարդկանց խմբերը, իսկ կանանց մոտ առանձնանում են բոլոր ուժեղ տիպերը: Դեռ ավելին, առանձին դեպքերում կանանց մոտ անկախ խառնվածքի բնութագրերից, բարձր մոտիվացիայի պայմաններում դրսևորում են հարմարվողականություն և հանդուրժողականություն: Որոշումների կայացման արդյունավետությունը գնահատվում է ապրանքների իրացման աստիճանով, եկամուտների արագ շրջանառության մեջ դնելու կարողություններով, որում հնարավորինս պահպանվում է եկամուտների գոնե նվազագույն աճ: Այստեղ, անկախ սեռից, աչքի են ընկնում բիզնես դաշտը տիրապետող, ստեղծարար անձինք, ովքեր կարողանում են իրենց դաշտում զգալ հավանական փոփոխությունների բնույթը (գների տատանման, դրամի կուրսի, ապրանքների ձեռքբերման, դրանց պահանջարկի, շուկայի հագեցվածության ու դեֆիցիտների հավանականությունը և այլն):

Անձի ստեղծարարության, իր բնագավառում հավանական փոփոխությունների կանխատեսման ու արդյունքների ճշգրիտ հաշվարկի հետազոտություններում աչքի են ընկնում փորձառու գործարարները, որոնց որոշումների կայացման արդյունավետությունը գնահատվում է ապրանքների իրացման աստիճանով, եկամուտների արագ շրջանառության մեջ դնելու կարողություններով, որում գրանցվում է եկամուտների հնարավորինս աճ: Այստեղ անկախ սեռից, աչքի են ընկնում բիզնես դաշտին տիրապետող, ստեղծարար անձինք, ովքեր կարողանում են զգալ հավանական փոփոխությունների բնույթը (գների տատանման, դրամի կուրսի, ապրանքների պահանջարկի, շուկայի հագեցվածության ու դեֆիցիտների հավանականությունը և այլն):

Ինչպես ցույց են տալիս մասնագիտական գրականության վերլուծությունները (Файоль А., Эмерсон Г., Тейлор Ф., Форд Г. 1992. Семенов А.К., Маслова Е.Л. 1999. Г.Минцберг 2004.), տարբեր գիտնականներ հաջողակ բիզնեսմենի հոգեբանական դիմանակարը տարբեր կերպ են արժևորում: Հաջողակ գործարարի հոգեբանական դիմանկարի առանցքային կողմնորոշիչները նրանց կողմից ունենալով ընդհանրություններ, ունեն նաև բավականին լուրջ կառուցվածքային տարբերություններ: Այդ իսկ պատճառով տարբեր գիտնականների մոտ հաջողակ գործարարի բնութագրերը կազմավորվում են տարբեր ասպեկտներով: Մասնավորապես, Շտեմբերգը գործարարի IQ–ի հիման վրա միանշանակ բնութագրի ձևակերպումը լիարժեք չի համարում: Հետևավաբար IQ–ի տեստային համակարգերը չեն կարող սպառիչ բնութագրեր տալ գործարար անձի հոգեբանական ունակությունների վերաբերյալ (մեկնաբանում. երիտասարդ գիտնականը, որը փայլում է իր ասպարեզում, հեշտությամբ կարող է խաբվել շուկայում, կամ փորձառու վարորդը մեքենայի, ճանապարհի վերաբերյալ կարող է դրսևորել գիտելիքների վարպետություն՝ ընդհանուր գիտելիքներով չփայլելով: IQ– ի արտահայտվածության

բնութագրերը տաբեր են ըստ տարածաշրջանի, աշխարհագրական դիրքի և մշակույթի)[2;10]:

Հարկ է նշել, որ մեր հետազոտություններում անկախ հետազոտվող համակազմի սեռից ու տարիքային առանձնահատկություններից, նրանք նույնպես չեն փայլում իրենց լայն մտահորիզոնով ու սոցիալ–քաղաքական ոլորտում իրենց տեղեկատվածությամբ, ընդգծված գրագիտությամբ և այլն: Սակայն իրենց ոլորտում տեղի ունեցող գործընթացներին տիրապետելու առումով, նրանք յուրահատուկ գիտակներ են: Նրանք, որպես օրինաչափություն, հմտորեն տիրապետում են հաջողության հասնելու ուրույն տեխնոլոգիաների, որոնց վերաբերյալ քիչ է գրվում, կամ գրեթե ոչ մի տեղ չենք հանդիպում: Այս հանգամանքը մեզ համար հանդիսանում է թերևս շատ կարևոր, քանզի արդյունքների վերլուծության ժամանակ ակամայից ձևավորվում է մի եզրակացություն, համաձայն որի այսպիսի մարդիկ իրենց բնագավառի համար սովորական երևույթ չեն: Դեռ ավելին, այսպիսի մարդիկ նախկինում իրենց հնարավորությունները փորձելով ամենատարբեր բնագավառներում, ձեռք բերելով կյանքի համալսարաններ-ի պրակտիկ փորձ, հեշտությամբ/համենայն դեպս նրանց հաջողվում է/ կարողանում են բիզնեսի բնագավառում ինքնահաստատվել ու ասել իրենց ուրույն խոսքը:

Որպես եզրակացություն՝ կարող ենք պնդել, որ արդյունավետ գործարարի հաջողության հիմքում ընկած են նրա անձի վերլուծական բանականությունը, ստեղծագործ, ճկուն գործնական միտքը, հոգեբանական բարձր աշխատունակությունը, նպատակների իրականացման հետևողականությունը, ինքնակառավարման ու ինքնակարգավորման ունակություններն ու փոխհարաբերությունների կառավարման ու կարգավորման նրբանկատությունը:

Անձի հարմարման, սոցիալիզացիայի հնարավորությունները հանդիսանում են ինքնադրսևորման ու հաջողությունների ապահովման գործառութային հնարավորություն, որոնք արտահայտվում են հոգեկան աշխատունակության, հոգեկան հուսալիության ու անբարենպաստ իրավիճակներում անձի սթրեսակայունության հատկանիշների դրսևորմամբ:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 13.12.2013թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Емельянов Е. Н., Поварницына С. Е. Психология бизнеса – М.: Экономика, 1998.– 511 с
2. Занюк С. Психология мотивации. Киев, Ника–Центр, Эльга–Н, 2001.– 352 с.
3. Куликов Л.В. Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики. Москва, ПИТЕР, 2004.– 464с.
4. Ломов Б.Ф., Сурков Е.Н. Антиципация в структуре деятельности. М.: Наука, 1980.279 с.
5. Маслоу А. Мотивация и личность. М., ПИТЕР, 2003.– 351с.
6. Минцберг Г. Структура в кулаке: создание эффективной организации. Спб.: Питер, 2004.– 512 с.
7. Питер Ф. Друкер. Эффективный управляющий. М.: ВСІ, 1994.–268 с.
8. Реан А.А., Кудашев А.Р., Баранов А.А. Психология адаптации личности. СПб, «Прайм–Еврознак», 2006.– 479с.
9. Тренев Н.Н. Стратегическое управление. Учебное пособие для вузов. М.: «Издательство ПРИОР», 2000.– 282с.
10. Strenberg R.J.(1997) Successful intelligence. New York:Plume

ИССЛЕДОВАНИЕ БАЗОВЫХ СОЦИАЛЬНО–ПСИХОЛОГИЧЕСКИХ ПРЕДПОСЫЛОК УСПЕШНОГО БИЗНЕСМЕНА В ТРАНСФОРМИРУЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ

СРБУИ ГЕВОРКЯН

Проректор по учебно–научной работе, профессорАрмянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, доктор психологических наук

МКРТУМЯН ВАЗГЕН

Соискатель кафедры развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна

В статье рассматриваются основные социльно–экономические, психологические проблемы трансформируюшегося обшества и их всестороннее воздействие на личность бизнесмена. Авторы экспериментальным путем выявляют психологическую структуру личности успешного бизнесмена, специфическую подструктуру его личностных качеств, обеспечивающих результативность и стабильность в бизнес среде. Выявлен также ряд психологических и социальных компонентов, которые являются основополагающими факторами для составления четкого психологического портрета личности бизнесмена.

Дата представления статьи:13.12.2013г.

THE INVESTIGATION OF THE BASIC SOCIAL–PSYCHOLOGICAL PREREQUISITES OF A SUCCESSGUL BUSINESSMAN IN THE TRANSITONAL SOCIETY

SRBUHI GEVORGYAN

Vice Chancellor of Education Quality and Distant Learning, Doctor of Psychology, Professor of the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

VAZGEN MKRTUMYAN

Applicant of the Chair of the Development and Applied Psychology, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

The article investigates the basic social–psychological prerequisites of a successful businessman in the transitional society.The social–economical, psychological, typical changes existing in the transitional society are described in the article. Due to some researches the authors discover the unique set of a productive businessman's personality, individual skills of effective business, which at the same time are considered to be the basic prerequisites to have success in the transitional society. Through researches a set of social–psychological, individual components have been discovered, which are considered to be the essential part of the person's psychological identity in the business sphere.

Article submission date 13.12.13